community

The New Apostolic Church around the world

01/2019/AM

2019 թվականի նշանաբանը՝

Հարուստ՝ Քրիստոսով

Խմբագրական՝ Գլխավոր առաքյալը նոր տարվա առիթով

Ժամերգություն՝ Ազատություն տանող ճանապարհին

Եկեղեցական ուսմունք՝ Եկեղեցու ընդհանրականությունը

New Apostolic Church
International

Հարուստ՝ Քրիստոսով

Լուսանկարը՝ Միացյալ ՆԱԵ

Սիրելի հավատացյալ քույր-եղբայրներ,

սրտանց բարի գալուստ նոր տարում: Իմ ցանկությունը հետևյալն է՝ եկեք այն սկսենք հավատի մեջ վստահությամբ, որը այսպես է արտահայտված 23-րդ սաղմոսում.,, Տերն իմ հովիվն է, և ինձ ոչինչ չի պակասի,,:

Չնայած մեր հոգսերին, ջանքերին և վախերին՝ մենք կարող ենք մեզ մխիթարված զգալ, քանզի Աստված անչափ հարուստ է - հարուստ է բարությամբ, հարուստ է համբերությամբ և հարուստ է ողորմածությամբ:

Եվ նա ցանկանում է իր հարստությունը մեզ հետ կիսել: Մենք կարող ենք մաս ունենալ այդ հարստությունից - և այն էլ՝ Հիսուս Քրիստոսով:

Սիրելի քույր-եղբայրներ, 2019-ի համար ես առաջարկում եմ, որ մենք կենտրոնանաք հետևյալ նպատակի վրա՝ մենք ուզում ենք հարուստ լինել Քրիստոսով: Դրա համար էլ թույլ տվեք այս տարին դնել, Հարուստ՝ Քրիստոսով, շանաբանի ներքո:

Ինչու՞մն է կայանում այդ հարստությունը: Ինչպե՞ս կարող ենք այն վաստակել: Այս հարցով մենք պետք է զբաղվենք հաջորդ շաբաթների ու ամիսների ընթացքում: Ինձ անչափ հետաքրքիր է, թե այս առումով Սուրբ Հոգին ինչ գաղափարներ կառաջացնի մեզնից յուրաքանչյուրի մոտ և համայնքներում:

Այս առումով ևս մի միտք է ծագում, որը մեզ համար առանձնահատուկ նշանակություն ունի՝ Քրիստոսով հարստությունը մենք կարող ենք կիսել- կիսել՝ առանց ինքներս աղքատանալու: Եկեք այդ հարստությունը բաժանենք մեր շրջապատի մարդկանց:

Դա ոչ միայն հնարավորություն կամ կարիք է, դա անգամ մեր որոշումն է:

Ես ցանկանում եմ, որ 2019-ը ձեզ համար լինի օրհնանքով առատ տարի :

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

| Ազատություն տանող ճանապարհին



Ժամերգություն 2018-ի ապրիլի 15-ին Տորոնտոյում / Կանադա/

Լուսանկարը՝ ՆԱԵ Կանադա

Հովհաննես 8,36

,,Իսկ արդ, եթե Որդին մեզ ազատի, ճշմարտապես ազատ կլինենք,,:

Իմ սիրելի քույր-եղբայրներ, նախ ես ձեզ ցանկանում եմ մասնակից դարձնել անձնական ուրախության: Որպես գլխավոր առաքյալ՝ օրինակ, չունեն „ Ժամերգության հիմնական մտքերը,,; ուրեմն պետք է ինքնուրույն փնտրեն խոսքը, իսկ դա միշտ մտահոգություն է բերում: Դա լավ է՞: Սա՞ է թախանձագին խնդրվածը… Երբ ես տեսա ժամերգության սկզբի երգը, որը ձեր շրջանային առաքյալն էր ընտրել, նկատեցի, որ երեկ և այսօր հենց այս աստվածաշնչյան խոսքն էր իմ ուշադրության կենտրոնում:Աստվածաշնչյան տեքստը մեջբերված է երգի առաջին հատվածում: Սա ինձ համար մի նշան էր՝,, Օ, դա ընտրել է սիրելի Աստված,, ; ինչի համար ես շատ երջանիկ էի:

Ես գիտեմ, որ եղանակային վատ պայմանների պատճառով այսօր այս ժամերգությանը հրավիրվածներից ոչ բոլորը կարող են այստեղ լինել / խմբագրության ծանուցմամբ՝ սառցահողմ/: Ես ցանկանում եմ այս առումով մի բան ասել՝ հավանաբար

շատերը հիմա հարցնում են.,, Ինչու՞ մեզ բախտ չվիճակվեց այս ժամերգությունն ապրելը,,: Մենք իհարկե, չենք կարող մեղադրել սատանային, քանզի սատանան պատասխանատու չէ եղանակի համար: Եղանակը որոշում է Աստված, սակայն դա ավելի է դժվարացնում հասկանալը, քանի որ մենք բոլորս աղոթել էինք այս ժամերգության համար: Մենք նախապատրաստվել էինք, երգերն էինք փորձել, իսկ հիմա տեսնում ենք, որ Աստված որոշել էր առանձնահատուկ եղանակային պայմաններ ուղարկել, որի պատճառով շատերը չկարողացան գալ: Ուրեմն՝ ի՞նչ է պատահել: Գուցե շատերը հիմա կարծում են, որ բավար չափով չեն աղոթել կամ ինչ որ բան սխալ են արել: Քույրեր և եղբայրներ, դա ամենևին էլ այդպես չէ: Որպեսզի պարզ լինի, ասենք, որ դա Աստծո կամքն էր, դա ձեր մեղքով չէր: Դրանում ոչ ոք մեղք չունի:

Հիշեք Պողոս առաքյալին: Նա հաճախ էր մտադրվել այցելել Հռոմի համայնքներին, սակայն, միշտ մի բան խանգարել էր / Հռոմ. 1,13/: Պողոսը Աստծո մեծ մարդ էր, ով կարող էր աղոթել, այնուամենայնիվ, նա չէր կարող անել այն, ինչ ցանկանում էր: Անշուշտ, նա այսպես էր մտածում՝ Հռոմի համայնքի և ինձ համար լավ կլինի, եթե ես նրանց այցելեմ; բայց ինչ որ բան խոչընդոտում էր: Աստված դրան այլ կերպ էր նայում, իսկ թե ինչու, Պողոսը չգիտեր: Մենք պետք է ըմբռնենք, որ մենք չենք կարողանում հասկանալ Աստծուն: Եսայի մարգարեն ասում էր. ,,Քանզի իմ մտքերը ձեր մտքերը չեն, և ձեր ճանապարհները իմ ճանապարհները չեն,-ասում է Տերը,-այլ՝ ինչքան ավելի բարձր է երկինքը, քան երկիրը, այդպես նաև ավելի բարձր են իմ ճանապարհները, քան ձեր ճանապարհները, և՝ իմ մտքերը, քան ձեր մտքերը,, / Եսայի 1,8-9/: Մենք չենք կարող Աստծուն ըմբռնել ոչ մեր հասկացողությամբ, ոչ էլ կարող ենք հասկանալ նրա գործերը:

Երբեմն նա պատասխանում է մեր աղոթքներին, երբեմն՝ ոչ: Կարող էին ասել. ,,Հիսուսը խոստացել է՝ Եվ ինչ որ ուզեք իմ անունով, այն կանեմ,,/ Հովհ. 14,13/: Սա հենց այն պահն է, երբ ասվում է՝ խնդրել Հիսուսի անունով: Ինչի՞ համար խնդրել Հիսուսին: Նա ասում է իր Հորը.,,Այս աղաչում եմ ոչ թե նրա համար, որ նրանց վերացնես աշխարհից, այլ որպեսզի նրանց պահես չարից,,/ Հովհ. 17,15/: Այդպես է Հիսուսը աղոթել: Մենք չենք մի բանում ստիպել, նաև այն ժամանակ, երբ ամեն ինչ ճիշտ ենք անում և կարծում ենք, թե Աստված հիմա պետք է ավտոմատ կերպով այնպես գործի, ինչպես մենք ենք ցանկանում; Նա անում է այն, ինչ կամենում է: Միակ բանը, որում մենք վստահ պետք է լինենք, այն է, որ Աստված կատարելու է իր խոստումը՝ ,, Ես սիրում եմ քեզ և ուզում եմ, որ դու հավերժ ինձ մոտ լինել և մենք հավիտենական միասնության մեջ լինենք,,:

Հիսուսը զոհաբերվել է մեր մեղքերի համար, որպեսզի մենք կարողանանք Աստծո արքայություն գնալ: Նա ասել է.,, Եթե դու իմ խոսքը պահես, ընդունես առաքյալներին, ովքեր ուղարկված են, որպեսզի քեզ նախապատրաստեն որպես հարսնացուկան համայնքի մի մաս, դու իմ արքայություն կգաս: Ես նորից եմ գալու, որպեսզի քեզ ինձ մոտ տանեմ,,: Սա աստվածային խոստում է՝ մեր հավատի հիմքը: Մենք չենք կարծում, որ Աստված մեզ տալու է այն ամենը, ինչը մենք խնդրում ենք նրանից: Մենք չենք կարծում նաև, որ Աստծուն ինչոր բանում կարող ենք ստիպել: Մենք խնդրում ենք նրան, իսկ նա երբեմն պատասխանում է, երբեմն՝ ոչ: Սակայն, մենք վստահում ենք նրա սիրուն: Մի բանում մենք կարող ենք բացարձակապես վստահ լինել՝ նա կատարելու է իր խոստումը և ուղարկելու է իր սիրելի Որդուն և բոլորը, ովքեր հավատարմորեն հետևում են Հիսուս Քրիստոսին, ովքեր իրենց թույլ են տվել առաքյալների միջոցով նախապատրաստվել Քրիստոսի գալստյանը, հավիտենական միասնություն են ունենալու նրա հետ: Սիրելի քույրեր ու եղբայրներ, մենք մեր հայացքը պետք է ուղղենք Հիսուսի այս խոստմանը: Այդ խոստումը նա կատարելու է: Իսկ մնացած բաներում մենք գիտենք, որ չենք կարողանում նրան հասկանալ, բայց վստահում ենք նրան: Նա միշտ հոգալու է մեզ համար, որ ունենանք այն ամենը, ինչի կարքիը մենք ունենք Քրիստոսի գալստյան ժամանակ:

> ,, Ճշմարտությունը ազատելու է ձեզ,,:

Դառնանք աստվածաշնչյան խոսքին: Այստեղ Հիսուսը խոսում է հրեաների հետ, ովքեր հավատում էին նրան: Նա ասում էր նրանց, որ նա նրանց կարող է ազատել: ,, Ազատությունն,, այսօր մեզ համար նշանակում է նախ՝ գերի չլինել: Ազատություն նշանակում է նաև իրավունք ունենալ ազատ շարժվելու և արտահայտվելու՝ առանց որևէ մեկի կողմից սահմանափակվելու: Այսպես ենք մենք այսօր հասկանում ազատություն հասկացությունը: Հիսուսի ժամանակներում դա մի փոքր այլ էր: Հիսուսը բացատրել է ազատության իմաստը: Նա համեմատել է ծառայի և երեխայի կարգավիճակները: Ծառան կամ ստրուկը ազատ չէ, քանի որ նա ապրում է իր տիրոջ տիրապետության տակ, ում կամքը նա պետք է կատարի: Նա պետք է աշխատի իր տիրոջ համար և դրա համար ոչ մի վարձատրություն չստանա: Դա է ծառայի կարգավիճակը: Երեխան թեև պետք է լսի իր հորը, բայց,վերջում նա ստանում է ժառանգությունը: Ըստ Հիսուսի՝ սա է տարբերությունը : Նա այդպես է պարզաբանում ազատությունը:

Հիսուսը ասում էր նրանց.,, Ճշմարտությունը ազատելու է ձեզ,,: Սա բարկացրել է հրեաներին: Նրանք պատասխանում էին նրան. ,, Մենք Աբրահամի հետնորդներն ենք և երբեք ոչ մեկի ծառան չենք եղել,,: Նրանք զայրացել էին. ,, Ինչպես՞ դու կարող ես ասել, որ դու ազատում ես մեզ: Մենք ազատ ենք,,: Մեզ համար դա տարօրինակ է հնչում, քանի որ մենք գիտենք, որ նրանք

գտնվում էին հռոմեացիների տիրապետության տակ: Դա հռոմեական տիրապետության ժամանակաշրջանն էր: Նրանք տառապում էին այդ տիրապետության տակ, այնուամենայնիվ, նրանց թվում էր, թե ազատ են և իրավունքներ ունեն, քանզի նրանք մնում էին հրեաներ, թեև նրանց երկիրը նվաճված էր և գտնվում էին հռոմեական տիարպետության տակ: Հռոմեացիները երբեք չէին կարող նրանց ստիպել դադարեցնելու իրենց հավատը: Նրանք ամուր էին պահում իրենց հավատը, իրենց սեփական օրենքներն ու ավանդույթները: Նրանք չէին դառնում հռոմեացիներ, և դա է նկատի առնվում այստեղ. ,,Մենք ազատ ենք: Թեև թշնամին՝ հռոմեական բանակն այստեղ է, մենք ազատ ենք: Մենք ամուր ենք պահում մեր հավատը, մեր օրենքներն ու ավանդույթները,,: Մենք հաճախ բացասական կարծիք ենք ունենում այն ժամանակվա հրեաների մասին, բայց ես պետք է ասեմ, որ նրանք հիացմունքի արժանի են: Շատ ժողովուրդներ չկան, որոնց կհաջողվեր պահելու իրենց հավատը, օրենքներն ու ավանդույթները՝ չնայած այն ամենին, ինչ նրանք ապրել են: Նրանք գիտակցում էին՝ սա մեր ինքնությունն է, սա ենք մենք: Մենք պետք է միշտ ամուր մնանք՝ անկախ տեղի ունեցածից: -Դրա համար ես հիանում եմ նրանցով:

Մենք սրանից կարող ենք դաս առնել: Որպես քրիստոնյաներ մենք էլ ե՞նք նույնքան ուժեղ : Կարո՞ղ ենք մենք էլ ասել՝ միևնույնն է, թե ինչ կլինի, անգամ, եթե օտար ոգիների տիրապետության տակ լինենք, մենք կանք ու մնում ենք քրիստոնյաներ: Անգամ, երբ այս աշխարհը ղեկավարվում է փողի կողմից, անգամ, երբ այսքան շատ տեսակետներ կան, մենք մնում ենք քրիստոնյաներ: Մեր ինքնությանն է պատկանում այն, որ մենք կիրակի օրերին ժամերգության ենք գնում, որպեսզի Աստծուն երկրպագենք: Մենք կարիք ունենք միասնական աղոթքի: Դա մեր հավատն է, մեր օրենքը: Մենք քրիստոնյաներ ենք և կատարում ենք զոհաբերություն, և ոչ ոք չի կարող մեզ ստիպել դա դադարեցնել: Դա է մեր ինքնությունը: Մենք ուզում ենք որպես քրիստոնյաներ ազատ լինել: Մենք քրիստոնյաներ ենք և մնում ենք այդպիսին: Անգամ, երբ աշխարհը ղեկավարվում է այլ ոգիների կողմից և կրում է դրանց ազդեցությունը, մենք պետք է ցույց տանք և ապացուցենք, որ մենք քրիստոնյաներ ենք և մնում ենք այդպիսին: Սա ազատության առաջին ասպեկտն է:

> ,,Անկախ նրանից , թե ինչ տեղի կունենա, մենք կանք ու կմնանք քրիստոնյաներ,,:

Իհարկե, Հիսուսը այլ կերպ էր կարծում և նա պետք է նրանց բացատրեր. ,, Լավ, բայց դուք դեռ մեղքի գերիներ եք,,: Դա հրեաների համար դժվար հասկանալի էր: Ադամն ու Եվան լսեցին օձին, ով նրանց շատ բաներ խոստացավ: Նրանք լսեցին, բայց վերջում մնացին խաբված: Սխալ որոշման պատճառով նրանք դարձան չարի ծառան: Մեղքի մեջ ընկնելու պատճառով բոլոր մարդիկ չարի գերիներ են: Մարդու և Աստծո միջև հայտնվել է մի կիրճ, որն անհնար է դարձնում Աստծո հետ միասնությունը:

Ղուկասի Ավետարանում Հիսուսն ասում է, որ նա ուղարկվել է, որպեսզի բանտարկվածներին ազատություն տա.,, Ես կարող եմ ձեզ ազատել, ձեզ փրկել այնպես, որ դուք այլևս չեք լինի չարի գերին: Նրանք, ովքեր իմ զոհաբերությամբ հավատում են ինձ, հնարավորություն ունեն նորից միասնություն ունենալ Աստծո հետ և դառնալ դեպի Աստված: Նրանք այլևս գերիներ չեն,,: Հետևյալն էր նկատի ունենում նա, երբ ասում էր. ,, Իսկ արդ, եթե Որդին

ձեզ ազատի, ճշմարտապես ազատ կլինեք,, / Հովհաննես 8,36/: Նրանք այլևս կապված չեն մեղքի պատճառով: ,, Ով հավատում է ինձ, ես կարող եմ նրան զորություն և օգնություն տալ, որի կարիքը նա ունի չարին և մեղքին մերժելու համար: Մենք ստիպված չենք չարը անելու: Մենք կարող ենք բարին անել: Դա մեր որոշումն է, և եթե, մենք որոշում ենք կայացրել բարին անելու, ես դրանում ձեզ կօգնեմ,,: Սա ազատության մեկ այլ ասպեկտ է: Նրանք, ովքեր հավատում են Հիսուսին, մկրտվել են Հիսուս Քրիստոսի անունով, այդ տիապետությունից ազատ են: Նրանք այլևս չարի գերիներ չեն, այլ՝ կարող են գնալ դեպի Աստված: Դա այն ազատությունն է, որը Հիսուսը կարող է մարդկանց տալ :

Սակայն, ազատությունը մշտական գործընթաց է: Մկրտությունը դրա միայն սկիզբն է: Կորնթացիների 2-րդ թղթի 3,17-ում գրված է.,, Որովհետև Տերն ինքը Հոգին է, ուր որ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատություն է,,: Տիրոջ Հոգին օգնում է մեզ Քրիստոսով ազատության հասնելու: Եվ մենք պետք է թույլ տանք այդ գործընթացը : Մենք ուզում ենք ազատ լինել այնպես, ինչպես Հիսուսը: Մենք ուզում ենք ազատ լինել Հիսուս Քրիստոսով: Սուրբ Հոգու ներգործությամբ, Ավետարանի քարոզմամբ, Սուրբ Հաղորդությամբ և Սուրբ Հոգու շնորհներով, որոնք մենք ընդունում ենք, կարող ենք այնպես ազատ լինել, ինչպես Հիսուսը: Ինչպիսի՞ն է այդ ազատությունը:

Պողոսը գրում է հռոմեացիներին.,,Որովհետև Քրիստոս Հիսուսի կյանք տվող հոգու օրենքը ինձ փրկեց մեղքի ու մահվան օրենքից,, / Հռոմ. 8,2/: Օրենքը նախատեսում է որոշակի բաներ: Այդպես և հրեական օրենքը՝ պետք է շատ կարգադրություններ կատարեն, պատվիրանները պահեն, իսկ եթե ոչ, ապա կպատժվեն: Դա Մովսեսի օրենքն էր: Հիսուսն ասում էր. ,, Եթե տիրում ես Աստծո ոգուն, եթե դու իմ հոգին ունես և հետևում ես իմ խոսքին, դու կարող ես այս օրենքից ազատվել,,: Ինչպե՞ս կլինի դա: Դա շատ հեշտ է, քանի որ Սուրբ Հոգով կնքվելու ժամանակ մեր սրտերը լցվում են Աստծո սիրով: Մենք այլևս ստիպված չենք լսում Աստծուն : Հիմա բոլորովին այլ է: Մենք սիրում ենք Աստծուն և փափագում ենք նրա հետ միասնությունը: Մենք հասկացել ենք, որ Աստծո հետ միասնություն տանող ճանապարհը առաջնորդվում է հնազանդությամբ: Եվ այդպես, մենք հստակորեն որոշում ենք պատվիրանները պահել, քանի որ մենք ուզում ենք նրա հետ հավերժ միասնություն ունենալ: Քանի որ մենք սիրում ենք Աստծուն և ուզում ենք հավերժ նրա մոտ լինել, հետևում ենք Հիսուս Քրիստոսի այն ճանապարհին, որը նա գցել է: Եվ դա միանգամից դառնում է մեր որոշումը: Մենք ազատ ենք լինում օրենքից, այլևս ոչ մի ստիպողականություն չի լինում: Մենք ինքնակամ որոշում ենք գնալ այդ ճանապարհով: Մենք ուզում ենք

Աստծո մոտ լինել, և դա այն ճանապարհն է, որը մեզ տանում է այնտեղ: Եվ դրան ենք ուզում հետևել: Մենք ապրել ենք այն, որ եթե պահում ենք պատվիրանները, Աստված ապրում է մեր մեջ: Եվ դա մի հրաշալի զգացում է: Մենք ուզում ենք Քրիստոսով խաղաղություն ունենալ: Այդ ճանապարհն ենք մենք ընտրել: Ոչ ոք մեզ չի ստիպում այդ ճանապարհով գնալ, մենք կարող ենք ինքներս դա ազատ որոշել:

Մեկ այլ ասպեկտ էլ կա: Այդ ազատությունը, որը գալիս է Հիսուս Քրիստոսով, մեզ նվիրվում է: Նա տալիս է այդ ազատությունը՝ առանց որևէ „ արդյունք„ պահանջելու: Աստծո էության բնորոշ գիծն այն է, որ նա մեզ ձրի տալիս է այն ամենը, ինչի կարիքն ունենք փրկության համար: Երբ մենք գիտակցենք, որ ազատությունը Հիսուս Քրիստոսի միջոցով ենք նվեր ստացել, ապա ի վիճակի կլինենք նաև ինքներս Աստծուն ինքնակամ ինչ որ բան տալու՝ մեր վստահությունը, մեր հնազանդությունը և այլն: Քրիստոսի ազատությունից ելնելով մենք ի վիճակի ենք, որ մեր կողմից այլևս Աստծուն վարձատրություն ստանալու որևէ պահանջ չներկայացնենք: Մենք ծառայում ենք Հիսուս Քրիստոսին՝ առանց որևէ ակնկալիքի: Եփեսացիներին գրված թղթում խոսվում է այն մասին, որ մենք Քրիստոսի ստրուկներն ենք / Եփես. 6,6/: Ստրուկը անում է այն, ինչ իր տերն է ասում: Նա կատարում է աշխատանք, բայց դրա համար ոչ մի վարձատրություն չի ստանում: Հիսուս Քրիստոսն ինքն էլ ուրիշների համար անսահման շատ բան է արել և վարձատրություն չի սպասել: Հիսուսը պետք է սրանում մեզ համար օրինակ լինի: Ազատությունն այնտեղ է, որտեղ Հիսուսն է: Եթե մենք նրա ծառաներն ու ստրուկներն ենք, ապա մենք ազատ ենք և ոչ մի ակնկալիք չունենք, այլ գործում ենք նրա հանդեպ ունեցած սիրով: Մենք Քրիստոսի ծառաներ ենք և այլևս այս աշխարհի ու նրա պահանջների գերին չենք:

Հիսուսն ինքնակամ նվիրում է իր սերը: Ոչ ոք չի կարող նրան կարգադրել, թե ում սիրի, ում՝ ոչ: Ոչ մարդկանց ծագումը, ոչ էլ նրանց սխալները կամ պահվածքը չեն կարող նրան դրանից զրկել: Նա պարզապես բոլորին սիրում է: Դա այս ազատության մեկ այլ հրաշալի ասպեկտն է՝ սիրել առանց կանխակալ կարծիքների: Նա կարողանում էր սիրել բոլոր մարդկանց և այդ Ոգին լցվում էր նաև մեր սրտերը: Թույլ տանք Սուրբ Հոգուն ձևավորելու մեզ այնպես, որ սիրենք մարդկանց՝ առանց ուշադրություն դարձնելու նրանց ծագմանը կամ սխալին, և եթե հասարակությունն ասի. „ Նրան դու չես կարող սիրել„; ապա մենք առարկենք. „ Ոչ, մենք ազատ ենք: Դուք չեք կարող մեզ կարգադրել, թե ում սիրենք, ում՝ ոչ: Մենք ուզում ենք սիրել բոլոր մարդկանց, ինչպես Հիսուսն էր անում„: Դա մարտահրավեր է և այնքան էլ հեշտ չէ, սակայն, Հիսուսի օգնությամբ դա կարող ենք, և նաև ինչքան շատ թույլ տանք մեզ վրա Սուրբ Հոգու ներգործությունը, այնքան ավելի շատ կարող ենք սիրել Հիսուսի նման՝ առանց կանխակալ կարծիքների: „ Երբ ես ձեզ ազատում եմ, դուք իսկապես ազատ եք„: Մենք ուզում ենք այնպես ազատ լինել, ինչպես Հիսուսը„: Սիրուց ելնելով՝ Հիսուսը դարձավ ստրուկ և ծառայում էր իր աշակերտներին: Նա նրանց ոտքերն է լվացել: Նա կատարել է այնպիսի աշխատանք, որոնք կատարում են ստրուկները: Եվ մարդկանց հանդեպ սիրուց՝ նա իրեն հավասարեցնում է ստրուկին և իր վրա է վերցնում նրանց մեղքերը: Նա դատապարտվում է և մահանում մեզ համար, որպեսզի մենք կարողանանք փրկվել: Սիրուց ելնելով՝ Հիսուսը դառնում է ստրուկ, որպեսզի մեզ փրկի:

Պողոսը գրում է, որ մենք կոչված ենք ազատության, սակայն, սիրով մեկը ծառայում է մյուսին / Գաղ. 5,13/: Աստծո զավակների ազատությունը չի նշանակում. „ Ես կարող եմ անել և ինձ թույլ տալ այն, ինչ ուզում եմ, ես անկախ եմ, ես ոչ մեկի կարիքը չունեմ„: Քրիստոսի

ազատությունը նշանակում է լինել Քրիստոսի մարմնի մի մասնիկը, երբ յուրաքանչյուր անդամ ծառայում է մյուսներին: Սիրուց ելնելով՝ մենք ծառայում ենք մերձավորին: Մենք միայնակ չենք, մենք ենք ու Աստված, և Աստվածն է ու մենք,հակառակը, մենք Քրիստոսի մարմնի մասն ենք: Մենք ուզում ենք միմյանց ինքնակամ ծառայել: Ոչ ոք չպետք է ավելի կարևոր կամ ավելի լավը լինի, քան մերձավորը կամ ավելի սիրված լինի, քան նա: Մենք չենք կարծում, որ մեր հոգսերն ավելի կարևոր են, քան մյուսներինը: Մենք չենք կարծում, որ մեր գաղափարներն ավելի լավն են, քան մյուսներինը: Եկեք ծառայենք միմյանց, հնազանդ լինենք և երկուստեք օգնենք միմյանց, որպեսզի մենք բոլորս փրկվենք:

Մենք ուզում ենք, որ բոլոր մարդիկ ազատվեն: Նրանք չպետք է այնպիսին դառնան, ինչպիսին մենք ենք: Մենք չպետք է կանադացիներ դառնանք: Նրանք կարող ենք մնալ այնպիսին, ինչպիսին որ կան: Ի սեր Աստծո, նրանք չպետք է ֆրանսիացիներ դառնան, որպեսզի փրկվեն: Տեսնում եք, դուք չծիծաղեցիք, երբ ես կանադացիներ ասացի, բայց… Դուք հասկանում եք, թե ես ինչ նկատի ունեմ: Երբեմն մենք կարծում ենք, որ մարդիկ պետք է այնպիսին լինեն, ինչպիսին մենք ենք, որպեսզի փրկվեն: Դեռ տիրում է այն միտքը, թե մենք ենք չափանիշը: Ոչ, Քրիստոսն է չափանիշը, մենք միայն ծառաներ ենք: Մենք պետք է օգնենք, որ բոլոր մարդիկ փրկվեն և կարողանան գնալ Աստծո արքայություն: Սակայն, մենք նրանցից չենք սպասում, որ նրանք այնպիսին դառնան, ինչպիսին մենք ենք՝ որ ապրեն կյանքի նույն ոճով, ունենան նույն մտքերն ու գաղափարները, նույն ճաշակը, ինչպես միշտ է: Մենք ծառայում ենք միմյանց, մենք օգնում միմյանց և ուշադրություն ենք դարձնում միմյանց վրա, անգամ, եթե մերձավորը այնպիսին չէ, ինչպիսին մենք ենք: Մենք կոչված ենք Քրիստոսի ազատությանը, և սիրուց ելնելով՝ ծառայում ենք միմյանց:

Եթե մենք այդպես գործենք, կարող ենք Քրիստոսի ժառանգակիցներ դառնալ: Այդ դեպքում Հիսուսը իսկապես կարող է մեզ ազատել: Նա կարող է մեզ ազատել մարդկային կյանքի ստիպողականությունից: Մենք կարող ենք հարության մարմին առնել, իսկ դա սահմանափակումների չի ենթարկվում, ոչ ժամանակի, ոչ էլ որևէ երկրային սահմանափակումների: Այդ մարմինը ազատ է, նա կարող է գնալ այնտեղ, ուր ուզում է: Մենք ազատված ենք լինում մեր բոլոր մարդկային թուլություններից, մեր ոչ կատարյալ լինելուց: Երբ մենք հետևում ենք Քրիստոսին և ավելի ու ավելի շատ ենք ընդունում Քրիստոսով ազատությունը, նա կարող է մեզ ամեն ինչից ազատել: Այդ դեպքում մենք կստանանք հարության մարմին և կկարողանանք նրա արքայություն գնալ, որտեղ չկան ոչ ցավ, ոչ տառապանք, ոչ արցունքներ: Դա երանելիություն է: Ժամանակի վերջում Աստված ողջ արարչագործությունը ազատելու է մեղքի տիրապետությունից: Պողոսը արդեն դա բացատրել է.,, Ժամանակի վերջում Աստված արարչագործությունը ազատելու է մեղքի իշխանությունից, և նա ստեղծելու է մի նոր արարչագործություն, որտեղ մեղքը այլևս տեղ չունի,,: Սա է պատմության վերջը, ամբողջ պատմության՝ բացարձակ ազատություն Աստծով և Քրիստոսով:

Սիրելի քույրեր ու եղբայրներ, եկեք այս մի քանի մտքերը պահենք՝ Հիսուսը մեզ ազատում է: Ով նրան հավատում է, ով մկրտված է, ազատվում է մեղքի տիրապետությունից: Նա ունի հնարավորություն Աստծո մոտ գնալու: Նա այլևս գերի չէ: Նա նաև հնարավորություն ունի մեղքը մերժելու, նա ստիպված չէ մեղք գործելու: Եթե նա որոշում է՝ ,, Ես մերժում եմ մեղքը, ես չեմ ուզում այդ մեղքը գործել,, ; ապա Հիսուսը նրան ուժ է նվիրում չարին ոչ ասելու: Նա այլևս գերի չէ: Մենք բոլորս ուզում ենք Հիսուս Քրիստոսով կատարյալ ազատության հասնել և դառնալ այնպիսին, ինչպիսին նա է: Մենք ստիպված չենք հնազանդ լինում: Մենք ազատ ենք և կարող ենք ինքնակամ գնալու հնազանդության ճանապարհով: Դա այն ճանապարհն է, որը տանում է դեպի Աստված, և մենք ուզում ենք այնտեղ գնալ: Մենք ինքնակամ ենք որոշում կայացնում:

Մենք կարող ենք Տիրոջը որպես ստրուկներ ծառայել: Մենք վարձատրություն չենք խնդրում, այլ դա անում ենք Հիսուսի հանդեպ սիրուց ելնելով, քանի որ նա մեզ համար շատ բան է արել և ուզում է իր ժառանգությունը կիսել մեզ հետ: Մենք նրան ծառայում ենք ինքնակամ, սիրուց ելնելով: Մենք պետք է ի վիճակի լինենք սիրել առանց պարտադրանքի և, քանի որ մենք կանչված ենք Քրիստոսով ազատության, մենք պետք է Քրիստոսի նման ծառայենք և երկուստեք օգնենք միմյանց: Մենք չպետք է տիրենք մերձավորի վրա, այլ պետք է օգնենք նրան և ընդունենք նրան այնպիսին, ինչպիսին որ կա, և հավատարիմ մնանք մինչև վերջ: Մենք դառնում ենք բացարձակ ազատ՝ ընդունելով հարության մարմին և սպասելով նոր արարչագործությանը, երբ արարչագործությունն ինքը ազատ կլինի մեղքի տիրապետությունից: Դա է մեր ապագան, դա է մեր առաջադրանքը, դա է մեր ճանապարհը:

Հիմնական մտքեր

Հիսուսը եկավ, որպեսզի նրանց, ովքեր հավատում են նրան, ազատի մեղքի տիրապետությունից: Մկրտությունը մեզ ազատում է ժառանգական մեղքից: Սուրբ Հոգին բացում է Քրիստոսով ազատության ճանապարհը: Այդ ազատությունը կայանում է նրանում, որ սիրեն ու ծառայեն Քրիստոսի օրինակով:

Բարին անել- բայց ճիշտ

Լուսանկարը՝ ԵՆԱ Կոնգոյի Դշ Հարավ-Արևելք

Պարզ է, թե ինչ պետք է արվի՝ բարին: Պարզ է նաև, թե ում պետք է դա արվի՝ մերձավորին: Բայց ընդհանրապես՝ ինչու՞: Մոտիվացիան շատ վճռորոշ է արդյունքի համար: Հինգ լավ և հինգ քիչ լավ պատճառ 2018-ի հուլիսի 21-ի Կինդուլում /Կոնգոյի Դեմոկրատական Հնարապետություն/ գլխավորի առաքյալի հետ տեղի ունեցած ժամերգությունից:

Ինչը կարող է սխալ ընթանալ

Գործունեությունը չպետք է մարդկային մտածելակերպի համաձայն լինի, նա նշում է հինգ բացասական օրինակ՝

- աստվածային օրենքների փոխարեն մեծամասնության կարծիքը լսելը՝ ,, Մենք չենք ասում, որ ամեն ինչ կարգին է, որովհետև դա յուրաքանչյուն էլ անում է: Միակ բանը, որը մեզ հետաքրքրում է, դա այն է, թե ինչ կասեր Հիսուսը այդ առիթով,,:
- Հիսուսին ծառայելու փոխարեն մարդկանց հետևելը՝,, Այն, ինչը որ անում ենք Տիրոջ համար, չենք անում, որ դուր գանք առաքյալին կամ առաջնորդին: Մենք հարգում ենք Աստծուն ծառայողներին, մենք սիրում ենք նրանց, բայց նրանք միայն գործիքներ են,,:
- փնտրում ենք հեղինակություն և փառք՝ ,, Մենք չենք գործում, որպեսզի մարդիկ հիանան մեզնով: Դա այն է, ինչը Հիսուսը իսկապես լիովին մերժել է,,:
- Գործում են հաշվենկատորեն՝ շատերը բարին են անում անպայման ինչ որ սպասելիքներով, որ նույնը իրենց նկատմամբ կանեն, եթե իրենք էլ կարիքի մեջ ընկնեն՝,, Ինչ որ անում ես, մի արա սոսկ քո շահի համար,,:
- անձին արտաքինով դատելը՝ ,, Արդյոք մարդիկ դա տեսնում են, թե՝ ոչ, արդյոք նրանք մեզ սիրում են,կամ՝ ոչ, արդյոք նրանք վաստակում են, թե՝ ոչ, մենք քարոզում ենք Ավետարանը և բարին ենք անում մեր շուրջը,,:

Ինչպես է այն ճիշտ ընթանում

Եթե գլխավորը Աստծո հետ հարաբերությունն է, այդ դեպքում գործունեությունը ճիշտ հիմքի վրա կլինի, պարզաբանում է գլխավոր առաքյալը: Այն պետք էլ ինի՝

- շնորհակալությունից բխող՝,,Ինչու՞ ենք մենք բարին անում: Մենք դա անում ենք Տիրոջ համար, քանի որ նա հրաշալի ավանդ է խոստացել: Դա հավիտենական կյանք է:
- հաստատակամությամբ՝ ոչ անշնորհակալ լինելը, ոչ էլ շրջապատի մարդկանց թերի հետաքրքրությունը չպետք է մեզ հեռու պահեն բարին անելուց: ,, Անգամ, եթե ոչ ոք ուշադրություն չի դարձնում բարու վրա, որը դու ես անում, դու դա արել ես Տիրոջ համար, և նա գիտի դա,,:
- մաքուր սրտով՝ ,,Տերը ոչ միայն տեսնում է, թե մենք ինչ ենք անում, նա նաև տեսնում է, թե ինչու ենք մենք դա անում: Իմ մեծ փափագն է, որ մենք իսկապես սիրուց ելնելով և առանց ետին մտքի Տիրոջը ծառայենք,,:
- ակնածանքով՝ ,, Մենք ստացել ենք մեծ խոստում, որ Հիսուսը գալու է, որպեսզի մեզ իր հետ տանի: Մենք հազարավոր պատճառներ ունենք բարին անելու,,:
- հնազանդությամբ՝ ,, Տերը խնդրում է մեզ մեր մերձավորի հանդեպ բարին անելու: Մենք հաճույքով կընտրեինք, թե ում պետք է բարին անենք: Իսկ Տերը ասում է մեզ՝,, Ոչ, ոչ, Դա իմ գործն է: Մերձավորը նա է, որին ես քո կողքին եմ դրել,,:

,, Ես գիտակցում եմ, որ դեռ շատ անելու բան կա, քանի որ մենք բոլորս մարդիկ ենք,,- ասաց գլխավոր առաքյալ Շնայդերը: ,, Այս ու այնտեղ մոտիվացիան ճիշտ չէ: Եկեք դա կարգի բերենք,,:

Եզրակացություն՝ ,, Մենք կոչված ենք բարին անելու: Մենք դա չենք անում մեր շահը փնտրելով, այլ՝ Տիրոջ հանդեպ սիրուց: Մենք ծառայում ենք Աստծուն հաստատակամությամբ, հնազանդությամբ և ակնածանքով՝ առանց որևէ կեղծավորության,,:

ՄԱՐԻԱՄՆ ՈՒ ՄԱՐԹԱՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 10,38-42-Ի

Հիսուսն ուղարկում է աշակերտներին, որպեսզի տեղեկացնեն Աստծո արքայության մասին: Նա ինքը ևս շրջում է երկրով մեկ և խոսում Աստծո տիրապետության մասին, որն արդեն սկսվել էր: Այդ նպատակով նա գալիս է Բեթանիա:

Հիսուսն ու իր աշակերտները գալիս են մի գյուղ: Այնտեղ ապրում էր Մարթա անունով մի կին: Նա իր տան մեջ ընդունում է Հիսուսին: Մարթան ուներ մի քույր, որի անունը Մարիամ էր, որը եկավ նստեց Տիրոջ ոտքերի առաջ և լսում էր



այն խոսքերը, ինչ ուսուցանում էր Հիսուսը։
Իսկ Մարթան, որ զբաղված էր տնային շատ գործերով, եկավ կանգնեց նրա մոտ և ասաց.,, Տեր, քեզ փույթ չէ՞, որ քույրս ինձ մենակ է թողել ծառայության գործի մեջ, արդ, ասա դրան, որ օգնի ինձ,,։
Հիսուսը պատասխանեց ու ասաց. ,, Մարթա, Մարթա, դու հոգս ես անում և շատ բաներով ես զբաղված, բայց այստեղ քիչ բան է պետք, Մարիամը ընտրել է լավ մասը, որ նրանից չպիտի վերցվի,,։

ԱՅՑ ՌՈԶԱԼԻՆԴԱՅԻՆ՝ ՄԱԼԱԲՈՅՈՒՄ / ՀԱՍԱՐԱԿԱԾԱՅԻՆ ԳՎԻՆԵՐԱ/

Ողջույն: Իմ անունը Ռոզալինդա է: Ես ծվել եմ 2006-ի նոյեմբերի 15-ին: Ես ունեմ հինգ քույր-եղբայրներ՝ Գաբրիելը, Կոնսուելոն, Յոլանդան,Վենանսիոը և Մարիա Իզաբելը: Ձեզ զարմացրե՞ց, որ ես ձեզ իսպաներեն ողջունեցի: Հասարակածային Գվինեան միակ երկիրն է Աֆրիկայում, որտեղ պաշտոնական լեզուն իսպանարենն է, մինչև 1968 թվականը այն եղել է իսպանական գաղութ:

Ցամաքային մասի հետ միասին Հասարակածային Գվինեային է պատկանում նաև հինգ կղզի: Ամենամեծ՝ Բիոկո կղզին Կամերունի ափի մոտ է: Ես ծնվել եմ ցամաքային մասում, բայց հետո մենք ապրել ենք Բիոկո կղզու վրա, երկրի մայրաքաղաք Մալաբոյում:

Կղզում շատ տաք է և հաճախ է անձրևում, այսինքն՝ տիրում է արևադարձային կլիման: Մեր անտառները կենդանիների դրախտավայրեր են՝ գորիլլաներ, եղջերավոր կենդանիներ, հովազներ, անտառային փղեր և շատ այլ կենդանիների տեսակներ կարող եք հայտնաբերել Հասարակածային Գվինեայում: Նաև կրիաներ- ամեն տարի հունվարին և փետրվարին հազարավոր կրիաներ են գալիս Բիոկոյի լողափեր: Այնտեղ նրանք իրենց ձվերը ածում են ավազի մեջ:

Ես արդեն ավարտել եմ կրտսեր դպրոցը, այն մեզ մոտ տևում է հինգ տարի: Հիմա ես հաճախում եմ վեցերորդ դասարան: Ես հաճույքով եմ սովորում, քանի որ հետագայում ուզում եմ բժշկուհի դառնալ: Ես սիրում եմ երգել, պարել և պատմություններ կարդալ:

Ստելը ես չեմ սիրում, ոչ էլ՝ հիվանդ լինելը: Երբեմն ես չեմ կարողանում տանել, երբ ինձ վրա կատակներ են անում, հատկապես, երբ դրանք վատ կատակներ են: Բացի դրանից, ես չեմ սիրում վեճ կամ բանավեճ: Ինձ դուր է գալիս խաղալը կամ հեռուստացույց դիտելը: Շաբաթվա վերջին օրերին իմ քույրերի հետ չմուշկասահքով եմ զբաղվում: Լուսանկարում դուք տեսնում եք ինձ Կոնսուելոյի, Յոլանդայի և իմ զարմուհի Գեմիմայի հետ / ձախից աջ/:

Ես պատկանում եմ Մալաբոյի համայնքին: Մարտի 2-ին Հասարակածային Գվինեա այցելեց գլխավոր առաքյալը, ցավոք ես չկարողացա նրան տեսնել, քանի որ ժամերգությունն անց էր կացվում Բաթա համայնքում: Ես հույս ունեմ, որ հաջորդ անգամ նա կգա Մալաբո:
Ես հաճույքով եմ գնում եկեղեցի: Երբ ես այնտեղ եմ լինում, ինձ երջանիկ եմ զգում, ես սիրում եմ երաժշտությունը:

Եկեղեցում են նաև իմ ընկերներ Սամիրան, Գրաչին, Օմարիտան, Կատրինան, իմ զարմիկ Քլոեն և իմ զարմուհի Գեմիման: Սկզբում ես հաճախում եմ կիրակնօրյա դպրոց, իսկ շուտով կսկսվեն նաև կոնֆիրմացիայի պարապմունքները: 2017-ի Սուրբ Ծննդյան ժամանակ ես հատվածներ եմ կարդացել

Աստվածաշնչից: Ժամերգությունը անց է կացրել իմ հայրիկը, նա մեր շրջանային ավագն է:

Այլյուրը՝ Ամագիր՝ ,,Մենք՝ երեխաներս,, ; հրատարակություն 09/18, լուսանկարը՝ մանավոր, Fotolia.com, voren1, coffeee_in – Fotolia.com

Լուսանկարը՝ © lamppost - stock.adobe.com

Եկեղեցու և Ավետարանի ընդհանրականության մասին

Նորառաքելական հավատի էական ասպեկտների մասին խոսվել է հավատամքի առաջին երեք հոդվածներում: Այնտեղ խոսք է գնում նաև ,, եկեղեցու ընդհանրականության,, մասին: Թե ինչ է դրանով նկատի առնվում, նկարագրում է գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը հետևյալ շարադրանքում:

Հավատամքի առաջին երեք հոդվածները վերաբերում են Սուրբ Երրորդություն Աստծո, Հիսուս Քրիստոսով Աստծո մարդացման, Քրիստոսի եկեղեցու, խորհուրդների, Քրիստոսի գալստյան և հավիտենական կյանքի հանդեպ մեր հավատին: Հաջորդիվ ցանկանում եմ հավատամքի երրորդ հոդվածից մի կարճ, բայց շատ կարևոր դրվագի վրա ուշադրություն հրավիրել՝ „ Մենք հավատում ենք միակ, սուրբ, ընդհանրական և առաքելական եկեղեցուն„: Եկեղեցին, որի մասին այստեղ խոսք է գնում, դա Քրիստոսի եկեղեցին է, այն պարզաբանվում է մեր դավանաբանության մեջ / ՆԱԵԴ 2,4,3/ 6,4/: Ես այստեղ ցանկանում եմ հետևյալ ասպեկտը նշել՝ մենք հավատում ենք, որ եկեղեցին ընդհանրական է / հունարեն՝ կաթոլիկ/:

Հավատը ընդհանրական եկեղեցու հանդեպ

Ընդհանրականությունը – այսինքն՝ կաթոլիկությունը, Քրիստոսի եկեղեցուն նվիրվում է՝

- աստվածային փրկության կամքի համապարփակությունից: Աստված ուզում է բոլոր ժամանակների, բոլոր ազգերի բոլոր մարդկանց և բոլոր հարաբերություններում հնարավորություն տալ փրկվելու մեղքից և հասնելու իր հետ միասնության: Աստծո այս ընդհանրական փրկության կամքը իր անմիջական արտահայտումն է գտնում եկեղեցում :
- այն առաջադրանքից, որը Հիսուսը տվեց իր առաքյալներին, որ Ավետարանը առանց որևէ սահմանափակման տեղեկացնեն- Ավետարանը արժեքավոր և ազդեցիկ է բոլոր մարդկանց համար՝ առանց բացառության:
- այն լիազորությունից, որը Հիսուսը տվել է առաքյալներին - այնտեղ, ուր գործում են առաքյալները, տրված են բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հասնեն փրկության իրականացմանը:

Եկեղեցու ընդհանրականություն կարող է ըմբռնվել միայն հավատի միջոցով: Իրականում եկեղեցու ընդհանրական բնութագիրը ոչ միշտ է ընդունելի իր տեսանելի կերպարում - այսինքն՝ իր պատմական իրականացման մեջ՝

- Քրիստոնեական հավատը ոչ ամենուր է նույն ձևով զարգանում:
- Ավետարանի ճշմարտացիությունն ու արդիականաությունը հարցականի տակ է դրվում:
- Վիճարկվում է եկեղեցու անհրաժեշտությունը որպես փրկության չափորոշիչ:
- Ժամանակակից առաքյալները շատ քրիստոնյաների կողմից չեն ընդունվում:

Այս ամրագրումները թույլ են տալիս հավասարեցնել անցյալն ու ներկան: Սակայն, կասկածն ու մերժումը, որոնց մենք հանդիպում ենք, ոչ մի դեպքում չպետք է թուլացնեն ընդհանրական եկեղեցու հանդեպ մեր հավատը: Մենք հավատում ենք Հիսուսի խոսքին. „Դժոխքի դռները „ չպիտի հաղթահարեն Քրիստոսի եկեղեցուն / Մատթ. 16,18/: Բոլոր դեպքերում մենք գիտենք, որ ընդհանրական եկեղեցու հանդեպ հավատը միայն այն ժամանակ է ավելի կենդանի դառնում, երբ այն նաև գործեր է անում: Այդ գործերը բաղկացած են Ավետարանի ընդհանրական տեղեկացումից և այն մտահոգությունից, որ Ավետարանը կարողանա ընդունվել բոլորի կողմից:

Ընդհանրական արժեքավոր Ավետարանի տեղեկացումը

Առաքյալները Հիսուսից առաջադրանք էին ստացել Ավետարանը քարոզել բոլոր արարածներին / Մարկոս 16,15/: Դա վերաբերում է առաքյալների ողջ ծառայությանը, այսինքն՝ ինչպես վաղ եկեղեցական առաքյալների, կաթոլիկ առաքելական եկեղեցու, այնպես էլ՝ նորառաքելական եկեղեցու:

Մեր վկայությունն ու քարոզը հիմնվում են ոչ միայն Ավետարանի և հավատամքի վրա, այլ նաև՝ մեր փորձի: Երբ մենք արարում ենք այս հոգևոր հիմքի վրա, կարող ենք ուշադրություն դարձնել մեր շատ ժամանակակիցների հոգսերին և հավանաբար պատասխաններ տալ՝

- Մենք կարող ենք աղքատներին ու դժբախտներին մխիթարել այն խոստմամբ, որ Հիսուսը սիրում է իրենց և հոգում է իրենց համար: Մենք կարող ենք նաև նրանց ուժեղացնել նրանով, որ ավելի հստակեցնենք քրիստոնյաների կապվածությունն ու օժանդակությունը միմյանց հանդեպ:
- Մենք կարող ենք բոլոր նրանց, ովքեր տառապում են , և նրանց, ովքեր վախ ունեն ապագայի հանդեպ , ուժեղացնել նրանով , որ վկայենք Հիսուսի գալստյան և հավիտենական կյանքի մասին:
- Նրանք, ովքեր անտեսված են հասարակությունից, ուրախություն կունենան, կգտնեն իրենց տեղը քույր-եղբայրական միասնության մեջ:
- Համայնքային կյանքը հավատացյալների համար բազմաթիվ հնարավորություններ կստեղծի, իրենց նվիրաբերելու և ճանաչելի դառնալու՝ բոլորովին անկախ կրթական մակարդակից և ընդունակություններից:
- Առաքյալների ուսմունքը, այսինքն՝ Ավետարանի գործնական տեղեկացումը, հավատացյալրների համար հնարավոր է դարձնում փոխվելու դեպի բարին և, հավանաբար, անգամ անձնական հավասարակշռության հասնելու:

Այս բոլոր պատասխանները ճիշտ են և համահունչ են Ավետարանին: Սակայն, մենք պետք է խոստովանենք, որ այն ընդհանրական արժեք չունի, այն չի վերաբերում անպայման բոլոր մարդկանց: Ոչ բոլորն են աղքատ կամ միջոցներից զուրկ, ոչ բոլորն են հիվանդ կամ օգնության կարիք ունեցողներ, ոչ բոլորն ունեն մխիթարության և ուժեղացման պահանջ: Բժշկության առաջընթացի շնորհիվ մարդիկ հիվանդությունների կամ տառապանքների դեպքում այլևս անօգնական չեն: Կյանքի երկար տևողությունը թույլ է տալիս մարդկանց ավելի քիչ մտածել մահվան մասին, քան անցյալում էր: Կյանքի և կապի միջոցների զարգացումը մեգապոլիսներում հեշտացրել են սոցիալական շփումները այնպես, որ անհրաժեշտ չէ որևէ համայնքին պատկանելը, որպեսզի սոցիալական շփումներ ունենան: Ժամանակակից մարդը այլևս Աստծո կարիքը չի զգում, որպեսզի իր կյանքը հաջողակ դառնա կամ գտնի իր անձնական հաշվեկշիռը, հավանաբար նրա համար, որպեսզի „ավելի լավը„ դառնա: Նա այլևս կարիք չունի մխիթարության ու խոստումների, որոնք բնականորեն պատկանում են քարոզին և հոգու խնամքին:

Արդյունքը՝ մեր վկայությունն այլևս չունի այն նույն ազդեցությունը մեր զրուցակցի վրա: Հատկապես երիտասարդների մոտ, ովքեր գոյության համար կարիքների մեջ չեն, այլևս արձագանք չենք գտնում: Մեզ խորհուրդ են տվել կենտրոնանալ Ավետարանի ընդհանրական խոսքի վրա, որը կարևոր է բոլոր մարդկանց համար: Ավետարանի ընդհանրականությունը հիմնվում է այն բանի վրա, ինչը Հիսուսը Քրիստոսը մեզ ուսուցանել է Աստծո մասին, Աստծո և մերձավորի հետ մեր հարաբերության և այն փրկության մասին, որը Աստված պատրաստում է մեզ համար՝

- Հիսուսը մեզ հայտնում է Աստծո կատարելությունը - մենք ոչ մեկից բարին չենք իմանում, բացի նրանից / Սաղմոս 16,2; Մատթեոս 5,48/:
- Հիսուսը ուսուցանում է մեզ, որ Աստված սեր է: Նա սիրում է առանց նախապայմանների: Նա ցանկանում է, որ մենք էլ սիրով պատասխանենք, այսինքն՝ առանց որևէ ստիպողականության:
- Ավետարանը մեզ բացահայտում է Աստծո Երրորդությունը՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի երեք տարբեր անձինք են, ովքեր կատարելապես մեկ են: Միայն Աստծո հետ միասնությունն է մարդու համար հնարավոր դարձնում տարբերությունները հաղթահարելը, որպեսզի միասնականությունը ըմբռնեն:
- Հիսուս Քրիստոսը իր մահվամբ և հարությամբ բացահայտեց Աստծո արքայություն տանող ուղին: Որպեսզի Քրիստոսի գալստյան ժամանակ վերջնականորեն չարից ազատվենք, մենք պետք է հետևենք նրա խոսքերին և գործունեությանը և նրան մեզ համար օրինակ ընդունենք:
- Աստված ուզում է մեզ կատարյալ խաղաղություն նվիրել նրանով, նա մեզ թույլ է տալիս դառնալ այն, ինչի համար նա մեզ ստեղծել է՝ մարդիկ իր նմանությամբ, ովքեր հավերժ կապրեն նրա հետ միասնության մեջ:

Այդ ավետիսն իսկապես ընդհանրական է: Այն պետք է առաքյալների քարոզի և յուրաքանչյուր քարոզի կորիզը լինի:

Ավետարանի ընդհանուր տեղեկացումը

Այսինքն՝ ուրախ լուրը պետք է տեղեկացվի բոլորին:

Երբեմն մենք նախապատվությունը տալիս ենք աղքատներին ու կարիքավորներին, քանի որ մենք կարծում ենք, որ նրանց վիճակը Ավետարանի համար իենց ավելի զգայնական են դարձնում: Այս ռազմավարությունը միշտ չէ արժանահավատ, քանի որ պարզվում է, որ իսկապես հավատացյալների հավատի արմատները պակասում են: Այնպես է ստացվում, որ մենք հապաղում ենք մարդկանց որոշ խմբերի հետ շփումներ ունենալ, քանի որ մենք կարծում ենք, որ մեզ համար այդ նախապայմանները հարմար չեն: Այս առումով, ես հիշում եմ այն մարդկանց, ովքեր ծայրահեղ աղքատության կամ ճնշումների ներքո են ապրում, կամ նրանց, իսկ այս պարագայում բացարձակ հակառակն է, ովքեր կրթված կամ բարեկեցիկ վիճակում են: Ես համոզված եմ, որ մենք պետք է մեզ ուժեղացնենք ոչ քրիստոնյաներով: Նույն խիզախությունը ցույց տանք առաջին քրիստոնյաների նման և Ավետարանի տեղեկացման համար սահմանափակումներ չանենք: Չհապաղենք նորարարներ լինել : Որպեսզի Ավետարանի ընդհանուր ավետիսը վստահորեն տեղեկացնենք, մենք կարիք չունենք ոչ երկրի վրա մեր կյանքը „ սատանայացնելու„; ոչ էլ՝ ապագան սև գույնով պատկերացնելու: Նման մտածելակերպը բնակչության մի մասին Ավետարանի ճշմարտությունը լիովին անընմբռնելի կդարձնի: Քրիստոսին հետևելը ոչ թե երկրի վրա հաճելի կյանքի առարկությունն է, այլ ընդհակառակը, այն կարող է դրան նպաստել:

Ավետարանի ընդհանրական տեղեկացումը բացառում է յուրաքանչյուր ձևականություն: Քրիստոսով նոր կյանքը կարող է տարբեր տնտեսական, մտածողության և մշակութային պայմաններում զարգանալ: Որպեսզի հետևի առաքյալների ուսմունքին, երիտասարդ սերունդը կարիք չունի իր նախասիրությունը կիսել իրենցից մեծերի հետ: Եկեք ղեկավարվենք Պողոս առաքյալի օրինակով .„ Եղա հրեաների հետ ինչպես հրեա, որպեսզի շահեմ հրեաներին: Եղա օրենքի տակ, ինչպես օրենքի տակ եղածները ոչ թե նրա համար, որ օրենքի տակ էի, այլ որպեսզի շահեմ նաև նրանց, որ օրենքի տակ են: Օրենքի տակ չեղողների հետ եղա ինչպես օրենքի տակ չեղող մարդ ոչ թե նրա համար, որ Աստծո օրենքի ենթակա էի, այլ Քրիստոսի օրենքի տակ էի, որպեսզի շահեմ օրենքի տակ չեղողներին:Եղա տկարների հետ ինչպես տկար,

որպեսզի շահեմ տկարներին: Բոլորի հետ ամեն ինչ եղա, որպեսզի թերևս փրկեմ ոմանց: Այս բոլորն անում եմ Ավետարանի համար, որպեսզի մասնակից լինեմ նրան,, / Կորնթ. Ա 9,20-23/: Այս ձևով է առաքյալը հետևում իրեն առաջադրանք տվողին: Որպեսզի մեզ հաղորդեն ուրախ լուրը , ,,իր անձը / Աստծո Որդին/ ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով և մարդու կերպարանքով խոնարհեցրեց ինքն իրեն,, / Փիլիպ 2,7/: Արդեն ավելի երկար, քան մենք, օրինակ, կաթոլիկ եկեղեցին առճակատվել է խնդրի հետ, դրա համար էլ նա զարգացրել է ,,ինկուլտուրացիայի,, պատկերացումը : Յվես Կոնգարի՝ կաթոլիկ աստվածաբանի համաձայն / 1904-1995/, ինկուլտուրացիան հիմնվում այն բանի վրա, ըստ որի պետք է՝ ,, հավատի սերմը ներդնել մի մշակույթի մեջ և այնտեղ համապատասխանաբար զարգացնել և դրա համաձայն այդ մշակույթի հատկություննն ու միջոցները գործի դնել,,: Մենք լավ կանենք, որ ղեկավարվենք այս գաղափարով, եթե մենք՝ արևմտյան մշակույթը չկրողներս, Ավետարանի վկայություն ենք տալիս կամ մեր հավատը ուզում ենք փոխանցել ապագա սերնդին:

Եկեղեցին՝ ընդհանրական վկա

Ոչ միայն մեր պատասխանատվություննն է Ավետարանը ընդգրկուն և բոլորին տեղեկացնելը, այլ նաև մենք պետք է հոգանք, որ մեր վկայությունը կարողանա ընդունվել բոլորի կողմից: Նորից Հիսուս Քրիստոսն է, ում մեջ մենք օրինակ ենք գտնում: ,,Դրա համար իսկ եկել եմ աշխարհ, որպեսզի ճշմարտության համար վկայեմ,, / Հովհաննես 18,37/:

Մենք կարող ենք միայն Ավետարանի ընդհանրական վկաներ լինել, եթե մենք արժանահավատ լինենք, դա նշանակում է, որ արժանապատիվ վկայենք այն ավետիսը, որը մենք տեղեկացնում ենք: Հիսուսի օրինակի համաձայն մենք պետք է՝

- վստահելի լինենք – մեր հավատը մեզ ամուր վստահություն է տալիս այն ամենի հանդեպ, ինչի հույսը մենք ունենք / Եբր. 11,1/, և այդ վստահությունը պետք է մեր շրջապատում ընդունելի լինի:
- վճռական լինենք չարը հաղթահարելու- եսասեր քրիստոնյայի վկայությունը արժանահավատ չէ:
- հնազանդ լինենք - Հիսուսը արեց հենց այն, ինչը Հայրը նրանից պահանջում էր: Մենք գտնվում ենք Հիսուսի ծառայության մեջ: Բարի լինենք կատարել այն, ինչը նա մեզնից սպասում է: Մեղավորը չի կարող այլ մեղավորներին տույժի ենթարկել / Հովh. 8,7/: Հակառակը, Հիսուսը մեզ արգելում է մերձավորին դատել / Մատթ. 7,1/:
- կապված չլինենք- ինչքան մենք քիչ կապված լինենք նյութական երևույթներից մեր սեփական պատվի համար,այնքան ավելի հեշտ կլինի մեզ համար ներել նրանց, ովքեր մեզ վնաս են հասցրել:
- լցված լինենք Աստծո և մերձավորի հանդեպ սիրով: Քանի որ մենք սիրում ենք Հիսուսին, մենք ազատ ենք նրա համար և նրա հետ տառապելու: Սիրենք մեր մեծավորին գործով և ճշմարտապես / Հովh. Ա 3,18/:

Ամփոփելով՝ ես հորդորում եմ մեզ բոլորիս՝ ամուր հավատի մեջ մնալու Քրիստոսի եկեղեցու և նրա ընդգրկուն կոչման հանդեպ: Այն կոչված է Ավետարանը ընդհանրական տեղեկացնելուն: Մեր առաջադրանքն է՝

- տեղեկացնել ընդհանրանական փրկության ավետիսը և չտարվել երկրորդական ասպեկտներով:
- հետևել Սուրբ Հոգու ազդակներին այնպես, որ ուրախ լուրը կարողանա տեղեկացվել առանց սահմանափակումների:
- առաջնորդվել Քրիստոսի օրինակով, որպեսզի ճշմարիտ վկաներ լինենք:

Լուսանկարը՝ Պատրիկ Դաքսենբիխլերի- stock.adobe.com

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան – Լյուք Շնայդեր, Իուբերլանդսսթրասսե 243,8051 Ցյուրիխ / Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆ ՍՊԸ հրատարակություն , Ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոյ- Իզենբուրգ/ Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Երիտասարդներից՝ երիտասարդներին

ևս մի քանի ամիս և կսկսվի միջազգային երիտասարդության օր 2019-ը: Երիտասարդների համար այդ ժամանակը շատ է դիմորդ դառնալու, նոր աշխատանք սկսելու կամ արհեստակցական միություն հիմնելու: Սակայն, դա քիչ ժամանակ է մեծ իրադարձության պլանավորման համար, որը պետք է ոգեշնչի ավելի քան 30 000 մասնակիցների:

Լուսանկարը՝ ԵԵԹ լուսանկարահանման թիմի

Ամանդան հասկանում է մեծ միջոցառումներից: Նա աշխատում է որպես միջոցառումների կազմակերպման մենեջեր և եկեղեցու շրջանակներում, որպես երիտասարդների հետ աշխատող, արդեն մի քանի երիտասարդական միջոցառումներ է պլանավորել և կազմակերպել: Զարմանալի չէ, որ նրան են առաջարկել, երբ ԻԵԹ ,, Ինհալթե/Բովանդակություններ/,, պլանավորման խմբի համար երիտասարդ անդամների էին փնտրում:

Ամանդան բյուրոյում արձակուրդ է վերցրել և մեկնել է հեսսենական Բադ Քամբերգ՝ մասնակցելու ՄԵՕ պլանավորման խմբի նստին: Երեկոյանն որառաքելական եկեղեցու խումբը գնում է մոտակա Թառունուշթայն: Այնտեղ հանդիպում են աշխատանքային խմբերը, ովքեր բծախնդրորեն աշխատում են միջազգային երիտասարդության օրվա նախագծերի վրա: Երբ բոլորը հակիրճ ներկայանում են, անցնում են կողքի երկու սենյակներ, որպեսզի իրենց նախագծերի վրա շարունակեն աշխատել :

Հավատը ըմբռնելի դարձնել

Երեխաների սենյակում նստած են Աննա Քարոլինան, Անկեն, Բենյամինը, Ժասմինը և Վանեսսան: ՄԵՕ պլանավորման խմբից եպիսկոպոս Ռալֆ Վիթթիշը և առաքյալ Ուլի Ֆալկը նստեցին նրանց կողքին և բացատրեցին, թե մի քանի ամիս ինչի վրա պետք է աշխատեն այդ հինգ հոգին՝ նրանք պետք է երիտասարդներին բացատրեն դավանաբանությունը:

Նկարներ, որոնք շուտով կգան՝ Եվրոպա –Երիտասարդության օր 2009 –ին հետևում է ՄԵՕ 2019-ը

,, Մեր գաղափարը երիտասրաները երիտասարդների համար արտադրանքն է, որը հասանելի կդարձնի հավատը և ցույց կտա, որ հավատը կարող է հաճույք պատճառել,, - բացատրեց Բենյամինը, ով որպես հեսսենական աշխատանքային խմբի անդամ՝ ղեկավարում է ,, Երիտասարդություն,, նախագիծը: Այդ հինգ երիտասարդները արդեն մեկ տարի է, ինչ ամիսը մեկ անգամ հանդիպում են իրար: Նրանց նախագծի կոնցեպտը կա, իրականացումը կատարում են միասին: Վանեսսան 18 տարեկան է, նրա կոնֆիրմացիայի պարապմունքներից շատ ժամանակ չի անցել, նա ասում է.,, Դարզ է, ես անգիր եմ սովորել հավատքի դրույթները, բայց թե ինչ նշանակություն ունեն դրանք ինձ համար, ես չգիտեմ,,: Քանի որ նրանք իրենք են տեղեկանում դրանց

մասին, հավատի վերաբերյալ խոսքերը դեռ տեսական են մնում, և բացակայում է առօրյա կյանքի հետ կապը, երիտասարդները մտադրվել են այլ երիտասարդ քրիստոնյաների համար մշակել այդ թեմաների վերաբերյալ պրակտիկ մոտեցումներ :

Դավանաբանությունը զվարճալի գործոնով

Նրանց խաղային տուփերում կարելի է գտնել հավատքի դրույթները և Աստվածաշունչ : Ընդ որում, երկու երիտասարդներ նստում են դեմ դիմաց, յուրաքանչյուրը մարմնավորում է Աստվածաշնչից որևէ մի կերպարի և հարցերին այո կամ ոչ պատասխանելով՝ պետք է հնարավորինս արագ գուշակի, թե աստվածաշնչյան որ անձն է թաքնված իր դիմացինի մեջ:

Հավատամքի դրույթները պլանավորման խմբի անդամերին անմիջապես ներկայացվում է պրակտիկորեն՝ խաղացողներին բաժանվում է քարտիկներ: Մեկը կարդում է հավատամքի դրույթներից մեկը: Երբ խաղացողներից մեկը անվանում է համապատասխան հասկացությունը, մյուսները հնարավորիս արագ իրենց ձեռքերը կենտրոնում իրար վրա են դնում: Ով ամենավերջինն է գալիս, պետք է վերցնի քարտը: Դա զարմանալիորեն լավ է գործում, մի քանի շրջանից հետո հիշողության ետևի անկյունում թաքնված հավատամքի դրույթը նորից վեր է հիշվում:

Երիտասարդները խաղերն այնպես են կազմակերպում, որ յուրաքանչյուր հետաքրքրվող կարողանա տպել կամ անվճար խաղալ App -ով և մուտքագրել տեսա-խաղային հավելված: Խաղարկային տուփի ձևավորումը և տեսանկարահանումները, ինչպես և խաղերի աստվածաբանական ստուգումներն ու թարգմանությունը պահանջում են մասնագիտական աջակցություն:

Կանանց վերաբերող հարց

Աղոթարանում հավաքվում են քույրերը և սպասավոր եղբայրները: Ամանդան կանգնում է մագնիսկան գրատախտակի մոտ և նշում, թե,, Կանայք,, նախագծային խումբը ինչ թեմաներ է ցանկանում միջազգային երիտասարդության օր 2019- ի համար: Կանանց համար պաշտոնի հարցը նրանք չեն ուզում թեմա դարձնել, քանի որ դրանում բոլոր միակարծիք են: ,, Սա այն թեման է, որին անդրադառնալու են գլխավոր և շրջանային առաքյալները տրված ժամանակում,- ասում է առաքյալ Գերթ Օփդենփլացը,,: Բայց դրա կողքին կանանց համար եկեղեցում կան շատ աշխատանքներ, որոնք հավանաբար դեռ ոչ բոլոր մարզերում ու համայնքներում են օգտագործվել: Պարզաբանում տալ այն մասին, թե երիտասարդ կանայք եկեղեցում ինչ կարող են անել և կերտել, աշխատանքային երկու խմբի անդամների փափագն է:

Գաղափարների հավաքագրումը շատանում է, նախագծային խմբերի անդամները դեռ երկար կբանավիճեին, սակայն նախասրահում առաջացած աղմուկն ու անհանգստությունը խախտում է աշխատանքը: Նախասրահ են գալիս երիտասարդներ՝ սպասքի, մրգի արկղերով և սառցախցիկներով: Արդեն Թաունուսշթայնի համայնքների երիտասարդների միասնական ընթրիքի ժամն է :

Ամենից առաջ հոգուտ կարճաժամկետի կողմնորոշված

Մակարոնեղեն, սպագետի և խնձորի հյութ վայելելով երկար սեղանի շուրջ խոսում էին այն մասին, թե ինչ հույսն ունեն երիտասարդները 2019 միջազգային երիտասարդությյան օրվա հետ կապված, ինչ բովանդակությամբ միջոցառումներ են նրանք ցանկանում և հաղորդակցման ինչ ճանապարհներով կցանկանային տեղեկացված լինել: Եվ պլանավորման խմբի անդամները տեղեկացնում են, որ երիտասարդները ցանկանում են ամենից առաջ որոշել կարճաժամկետ և ինքնաբուխ միջոցառումների անցկացում, երկարաժամկետ պլանավորումը նրանց համար քննարկման հարց չի դառնում: ,, Ես այն զգացումն ունեմ, որ ՄԵՕ միջոցառումը դեռևս լայն քննարկում չի գտնում երիտասարդների մոտ, նրանց համար 2019-ը դեռ հեռու է,,- ասում է Ամանդան: Դա փոխելու լավագույն ժամանակը Թաունուսշթայնում կլոր սեղանի շուրջ քննարկման պահն է: Դրա համար ամենից առաջ կարիք կա ոգևորվածների, ովքեր երիտասարդներին կվարակեն, ինչպես Հանեսը՝ Թաունուսշթայնի համայնքի երիտասարդների հետ աշխատողը, ով ասում է. ,, Այն ժամանակ ես մասնակցում էի ՄԵՕ միջոցառմանը, իսկ դա մի արտակարգ ապրում էր, ես ամեն ինչ անելու եմ, որպեսզի ,,իմ,, երիտասարդները դա ապրել կարողանան նաև 2019-ին,,:

Սախաատեսում

06.01.2019	Բեռն (Շվեյցարիա)
12.01.2019	Հուամբո (Անգոլա)
13.01.2019	Բենգելա (Անգոլա)
20.01.2019	Մայնց (Գերմանիա)
27.01.2019	Քեյփ Քոսթ (Գանա)
03.02.2019	Բեռլին (Գերմանիա)
10.02.2019	Շառլոտտա (ԱՄՆ)
03.03.2019	Բույումբուրա (Բուրունդի)
10.03.2019	Ռոզենհայմ (Գերմանիա)
15.03.2019	Կոլոնիա (Ուրուգվայ)
17.03.2019	Կոլոնիա (Ուրուգվայ)
24.03.2019	Դեսսաու (Գերմանիա)
31.03.2019	Կամպալա (Ուգանդա)

New Apostolic Church
International